Հաստատում եմ՝ 25 նոյեմբերի 2022 թ.

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի

Գիտական գծով պրոռեկտոր,

փիլիսոփայական գիտությունների դոկտոր,

Ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների թեկնածու,

պրոֆեսոր Ավետիսյան Պարգև Սերգեյի

ԿԱՐԾԻՔ ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Ռաֆայել Գառնիկի Հարությունյանի «Մեդիա դիսկուրսի համակցված քննություն (անգլերեն քաղաքական խոսքի փաստական նյութի հիման վրա)»

Մեդիա դաշտը լեզվական մտաշահարկման ոլորտ է, որը սոցիալական հաղորդակցման ուղերձը միջնորդավորված ձևով հասցնում է հասցեատիրոջը: Տեղեկատվությունը, մասնավորապես՝ քաղաքականը, ընթերցողին ներկայացնելու բազմաթիվ միջոցներ ու եղանակներ կան, որոնք կարող են գործադրվել ինչպես բացահայտ, այնպես էլ քողարկված՝ լեզվական միավորների արհեստավարժ մտաշահարկմամբ:

Ատենախոսության **նպատակը** մեդիա դիսկուրսում կիրառվող մտաշահարկային լեզվի ամբողջական կամ մասնակի ներուժի համակողմանի քննությունն է: Ինչպես իրավամբ նշում է ատենախոսության հեղինակը, մտաշահարկումն իրականացվում է տարբեր լեզվական միջոցներով, որոնց կիրառումը մտաշահարկողներին հնարավորություն է տալիս թիրախավորելու, մոլորեցնելու և շփոթեցնելու իրենց հասցեատերերին, որոշակի ազդեցություն գործելու նրանց վրա և ուղղորդելու նրանց ընկալումը:

Իր առջև այս նպատակը դնելով՝ ատենախոսն իհարկե նախ և առաջ դիտարկում է քաղաքական դիսկուրսի ուսումնասիրության տարբեր տեսություններ, վեր է հանում քաղաքական խոսքի այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են լեզուն, գործողությունը, հակամարտությունը, համագործակցությունը և այլն, ուսումնասիրում մտաշահարկման հայեցակարգը, քաղաքական մեդիա դիսկուրսի բառային, ձևաբանական և շարահյուսական բնութագրական գծերը, որն էլ նրան բերում է այն

համոզման, որ մեդիայում և մասնավորապես քաղաքական լրատվական հոդվածներում մտաշահարկման դրսևորումները բազմաեղանակային բնույթ ունեն: Աշխատանքում առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում մտաշահարկման՝ առցանց հարթակի միջոցով իրականացրած որակական-քանակական ուսումնասիրությունը:

Ատենախոսության, թեման, անշուշտ, չափազանց արդիական է, և այդ արդիականությունը հիմնավորվում է քաղաքական մեդիա դիսկուրսի աննախադեպ կարևորությամբ և ժամանակակից աշխարհում նրա կատարած դերով:

Ատենախոսն, ըստ էության առաջին անգամ փորձ է անում մեդիա-քաղաքական լուրեր ներկայացնող հոդվածները և դրանց վերնագրերը ենթարկել համակցված և համապարփակ լեզվա-գործաբանական արժևորման՝ դրանով իսկ ապահովելով իր կատարած ուսումնասիրության նորույթը: Նոր է նաև ուղեկցվող առցանց հարցման ծրագրաշարով իրականացված որակական-քանակական հետազոտությունը, որն, իրոք, ելակետ է մտաշահարկման բազմաեղանակային գործիքակազմի վերհանման համար և գալիս է հաստատելու հետազոտության ձեռք բերված արդյունքների հավաստիությունը:

Ի՞նչ խոսք, որևէ տարակույս չկա, որ ուսումնասիրության արդյունքները կարող են միանգամայն արդյունավետ ներդրում դառնալ լեզվա-գործաբանության, իմաստաբանության, լեզվա-ոճաբանության, մեդիա ուսումնասիրությունների, լրագրության, քննադատական դիսկուրսի վերլուծության տեսական ու գործնական դասընթացներում:

Հետազոտությունը արժեքավոր է նաև տարաբնույթ մեթոդների արդյունավետ կիրառման առումով. համեմատական-հակադրական, ինդուկտիվ, դեդուկտիվ, դիս-կուրսի և քննադատական դիսկուրսի վերլուծության, իմաստաբանական, իմաս-տագործաբանական, լեզվա-ոճական, ինչպես նաև տեքստաբանական և նշանա-գիտական վերլուծության մեթոդները, որոնց համադրումը թույլ է տալիս հասնել հուսալի արդյունքների:

Ներածությունում ատենախոսը հիմնավորում է ուսումնասիրվող թեմայի ընտրությունը, արդիականությունը, նորույթը, նպատակն ու խնդիրները, տեսական և

գործնական նշանակությունը, մեթոդաբանությունը, հետազոտության ոլորտը, հետազոտության փաստական նյութը:

Առաջին գլխում՝ «Քաղաքական մեդիա դիսկուրսը որպես տեսական ուսումնասիրության առարկա» ատենախոսը քննության է առնում քաղաքական խոսքի և մեդիա-քաղաքական դիսկուրսի ուսումնասիրության տարբեր տեսություններ և մոտեցումներ, լեզու-դիսկուրս հարաբերակցությանը, քաղաքականության հիմնական բաղադրիչներին (լեզու, գործողություն, հակամարտություն, համագործակցություն) վերաբերող խնդիրները: Ուսումնասիրված են նաև քաղաքական մեդիա դիսկուրսում կիրառվող մտաշահարկման ռազմավարության ու մարտավարության ընդհանուր խնդիրներ: Ատենախոսը գալիս է այն եզրահանգման, որ քաղաքական մեդիա դիսկուրսի համատեքստում առկա մտաշահարկման տարբեր դրսևորումները ճանաչելու և դրանց հակազդելու համար անհրաժեշտ է դիսկուրսի սթափ ու գիտակցված արժևորում:

Երկրորդ գլխում՝ Մտաշահարկման տարբեր հայեցակերպերի քննությունը քաղաքական մեդիա դիսկուրսում» ատենախոսը վերլուծության է ենթարկել մտաշահարկման երևույթի տարբեր հայեցակերպերը, մասնավորապես՝ բառային արտահայտությունը, ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունները, ոճական դրսևորումները, մտաշահարկումը՝ որպես տեքստաբանական երևույթ և մեդիա-քաղաքական մտաշահարկումը՝ որպես որակական-քանակական ուսումնասիրության առարկա:

Ատենախոսը մանրամասն ուսումնասիրության է ենթարկել բառային մակարդակում իրականացվող մեդիա-քաղաքական մտաշահարկումը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ առաջին հերթին հենց բառն է խոսքում իմաստ ձևավորում:

Ատենախոսության ուսումնասիրության առանցքում են քաղաքական մեդիա լրատվության մտաշահարկային դեպքերը լեզվի ձևաբանական և շարահյուսական մակարդակներում և այն ոճական հատկանիշները, որոնք նպաստում են լրագրողական խոսքի ազդեցության ինտենսիվացմանը, ընթերցողի հետաքրքրության ակտիվացմանը:, Ատենախոսը գալիս է այն եզրակացության, որ լրագրողները մարտավարական նպատակներով հաճախ կիրառում են լեզվա-

ոճական տարբեր հնարներ, որոնք ավելի հարուստ ու տպավորիչ են դարձնում խոսքը, բայց նաև կարևոր պրագմատիկ խնդիր են լուծում, քանի որ դրանք մեծ չափով օգնում են ավելի ընդլայնելու աջակիցների շրջանակը և հետևորդներ ներգրավելու:

Միանգամայն իրավացի է ատենախոսը, եզրակացնելով, որ քաղաքական մեդիա դիսկուրսը հասկանալը և, որ ամենակարևորն է, մտաշահարկումներից խուսափելը պահանջում են ոչ միայն լեզվական, այլև արտալեզվական հմտություններ, նաև տարբեր ռազմավարությունների իրազեկվածություն: Հետևաբար՝ տեքստային վերլուծության մեթոդը ուսումնասիրության այն բազմահայեցակերպ մոտեցումն է, որը հնարավորություն է տալիս վեր հանելու քաղաքական մեդիա լրատվական մտաշահարկման ամբողջական ներուժը:

Ատենախոսը փաստում է, որ ուսումնասիրության մեջ որակական-քանակական հետազոտության մեթոդների ինտեգրումը օգնում է ավելի խոր պատկերացում կազմել այն մասին, թե ինչպես է հանրությունը կարողանում ընկալել և բացահայտել լեզվական մտաշահարկման դեպքերը մեդիա-քաղաքական լուրեր ընթերցելիս: Իրոք, այն հնարավորություն է տալիս տարբերակել մտաշահարկման լեզվական ու արտալեզվական դրսևորումների յուրահատկությունները, իսկ սա հնարավորություն է տալիս ըստ ամենայնի դասդասել ու կիրառել ստացված գիտելիքներն ու տվյալները:

Ատենախոսության Եզրակացություն բաժնում ատենախոսն ամփոփում է քաղաքական մեդիա դիսկուրսի ոլորտում իր ուսումնասիրության արդյունքները: Հետազոտական աշխատանքը աչքի է ընկնում անգլալեզու մեդիա քաղաքական խոսքի փաստական նյութի ճիշտ ընտրությամբ և կիրառությամբ և վերլուծության ինքնատիպ մոտեցումներով: Աշխատանքում ներկայացված են հետաքրքիր օրինակներ՝ տարբեր խոսքի մասերի առանձնահատկությունների կիրառության, հաճախականության, շարահյուսական, ոճական հնարների ուշագրավ վերլուծություններ:

Սույն ատենախոսությունը կատարված է բարեխղճորեն, գիտական առումով հաջողված է, ունի տեսական և գործնական կարևոր նշանակություն, գրված է պատշաճ մակարդակով:

Ատենախոսության թեմայի կառուցվացքային ու բովանդակային ընդգրկումը լիովին արդարացված է ժամանակակից քաղաքական մեդիա դիսկուրսի լեզվաբանական և միջգիտակարգային ուսումնասիրությունների տեսանկյունից:

Այսպիսով, ատենախոսության հեղինակը՝ ի պատիվ իրեն բազում բացահայտումներ է կատարել մտաշահարկման վերաբերյալ որպես ուսումնասիրության առարկա, ի՛ր իսկ առաջադրած հարցադրումների և լեզվական փաստացի նյութի հիման վրա՝ օգտագործելով համապատասխան լեզվաբանական մեթոդների մի ամբողջ զինանոց և ուսումնասիրության ռազմավարություն, որը հնարավորություն է տվել ատենախոսին արձանագրելու բազմանիստ քաղաքական մեդիադիսկուրսի անքակտելի կապը կյանքի տարաբնույթ երևույթների հետ: Ատենախոսությունը աչքի է ընկնում նյութի խորը ուսումնասիրությամբ և իմացությամբ, շարադրանքի հստակությամբ, գիտական խորքային վերլուծությամբ:

Բարձր գնահատելով ատենախոսի կատարած աշխատանքը՝ կցանկանայինք ստանալ որոշ հարցերի պարզաբանումներ:

1. Տպավորություն է ստեղծվում, որ քաղաքական դիսկուրսը և քաղաքական մեդիա դիսկուրսը նույնացվում են:
2. Ըստ հեղինակի մտաշահարկումն առավել ուղղված է բացասական, քան դրական ազդեցություն ձևավորելուն: Չէ՞ որ դրական ազդեցությունը նույնպես կարևոր է, դրանով ապահովվում է իշխանության երկարակեցությունը.
3. Հեղինակը ենթավերնագրերից մեկը ձևակերպել է այսպես՝ *Manipulation as a Textological Phenomenon*, ճիշտ չէր լինի՞ արդյոք այն դիտարկել որպես մակարդակ և ոչ երևույթ:
4. Որտե՞ղ են գերակշռում մանիպուլյատիվ ռազմավարությունները բանավոր թե գրավոր մեդիադիսկուրսում:

Վերը նշված նկատառումները ամենևին չեն նվազեցնում կատարված հետազոտության արժանիքները: Ընդհանուր առմամբ, կարելի է փաստել, որ իրականացված է բավականին լուրջ, տեսական և գործնական նշանակություն ունեցող հետազոտություն: Ատենախոսությունը բավարարում է թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջները և հեղինակն արժանի է իր հայցած բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին: Սեղմագիրն իր կառուցվածքով և բովանդակությամբ համապատասխանում է ատենախոսությանը:

Հեղինակի տպագիր հոդվածները արտացոլում են ատենախոսության բովանդակությունը:

Վերոնշվածը թույլ է տալիս միջնորդել ԵՊՀ գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի առաջ՝ Ռաֆայել Գառնիկի Հարությունյանին շնորհելու բանասիրական գիտությունների թեկնածուի հայցվող աստիճանը Ժ.02.07 «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտության գծով:

Գրախոսականը քննարկվել և հաստատվել է Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի լեզվի տեսության և միջմշակութային հաղորդակցության ամբիոնի 2022 թվականի նոյեմբերի 25-ին կայացած N4 նիստում:

Ատենախոսության քննարկմանը ներկա էին Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի լեզվի տեսության և միջմշակութային հաղորդակցության ամբիոնի հետևյալ անդամները՝ բ.գ.դ., պրոֆեսոր Կ. Մատինյանը, մ.գ.դ., պրոֆեսոր Ի. Կարապետյանը, բ.գ.դ., պրոֆեսոր Ա. Սիմոնյանը, բ.գ.դ., դոցենտ Մ. Սարինյանը, բ.գ.թ., դոցենտ Ն. Թովմասյանը, բ.գ.թ., դոցենտ Ս. Թումանյանը և ուրիշներ:

Առաջատար կազմակերպություն՝
Ռուս-Հայկական (Սլավոնական)
համալսարանի լեզվի տեսության և
միջմշակութային հաղորդակցության
ամբիոնի վարիչ,
բ.գ.դ., պրոֆեսոր՝ Ա. Ա. Սիմոնյան

Հաստատում եմ՝ 25 նոյեմբերի 2022թ.

Գիտքարտուղար,
բ.գ.թ.՝ Ռ. Ս. Կասաբաբովա